ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 05 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղ. Ռուբեն Թորոսյանի դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Ռուբեն Թորոսյանը 02.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ ընտրական օրենսգրքի 63.1.-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սույն անհատական դիմումի քննությունն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Հարկ է արձանագրել, որ դիմողը պատշաճ մակարդակով իրավաբանորեն չի հիմնավորել թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև:

Վերը նշված իրավական դիրքորոշումն ամրագրված է ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴՈՐՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

05 փետրվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-4